# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վարդաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վարդաշեն, 091162071, VARDASHENI@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 29

### ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**

Հաստատել Վարդաշեն համայնքի ավագանու թիվ 8 հերթական նիստի օրակարգի հետևյալ հարցերը՝

1.Վարդաշեն համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանելու մասին :

2.Վարդաշեն համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին :

3.Վարդաշեն համայնքի համայնքապետարանի գույքագրման արդյունքների անփոփման և հաստատման մասին :

4.Վարդաշեն համայնքի 2019 թվականի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին :

5.Վարդաշեն համայնքի զարգացման ծրագրում համայնքի սեսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացնելու մասին:

Կողմ - Դեմ - Ձեռնպահ -

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԿՈԼՅԱ
ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ՀԱԿՈԲ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ԲԱՐԽՈՅԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՎԱՐԴԱՇԵՆԻ ... *04200427*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վարդաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վարդաշեն, 091162071, VARDASHENI@mail.ru

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 30-Ա

### ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով , ''Տեղական տուրքերի և վճարների մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ , 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Սահմանել Վարդաշեն համայնքի տարածքում 2019թ -ի համար տեղական տուրքերը և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :

Կողմ - Դեմ - Ձեռնպահ -

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԿՈԼՅԱ

ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ԲԱՐԽՈՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Համայնքի ավագանու 2018թ դեկտեմբերի 19-ի
թիվ 30 որոշման

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արարատի մարզի Վարդաշեն համայնքի տարածքում 2019թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝7500/յոթհազարհինգհարյուր/ դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000/տասնհինգ/ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 20000/քսան/ հազար դրամ.,

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝1500 / հազարհինհարյուր/ դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝2500 /երկու հազարհինգ հարյուր/ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500/հազար հինգհարյուր/ դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերակազմման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500/երկու հազարհինգ հարյուր/ դրամ

4) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500/երկուհազարհինգ հարյուր/ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000/երեքհազար / դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝7000/յոթ հազար / դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000/տաս հազա/ դրամ,

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500/երկուհազար հինգհարյուր / դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000/երեք հինգ հարյուր/ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000/յոթ հազար/ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000/տաս հազար/ դրամ,

5/. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երկու հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

6) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար,

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000/մեկ հազար/ դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500/հազարհինգ հարյուր / դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750/յոթ հարյուրհիսուն/ դրամ,

զ. Դատարկ գովազդային վահանակների համար 700/յոթհարյուր/դրամ

### Վարդաշեն համայնքի տեղական վճարների դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.սահմանել 1000/հինգհազար/դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000/հինգ հազար/դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 500/հինգհարյուր/դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.1000/հազար/ դրամ

Մրցույթների և օտարումների համար քայլի չափը սահմանել՝ 5000 ՀՀդրամ

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է՝

1/ Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 20ՀՀ դրամ 1քառ.մ

2/ Կրթության, մշակույթային, առողջապահական ,սպորտային շինություններ 2ՀՀ դրամ/ 1քառ.մ

3/ Արտադրական , արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 4ՀՀ դրամ /1քառ.մ

4. Աղբահանություն և կեցաղային աղբը հեռացնելու համար վճար համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 100/հարյուր/դրամ

ա/ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերեսի համար առավելագույնը 1 դրամ :

5. ոչ կենցաղային նխոշոր եզրափակիչ աղբի համար

ա/ ըստ ծավալի մեկ խորհանարդ մետրի աղբի համար առավելագույն 2000 դրամ.

6. Անասնաբուժական ծառայությունների համար սահմանել վճար՝

ա/ մեկ պայմանական միավոր գլխաքանակի համար՝ 250 դրամ :

Աշխատակազմի քարտուղար՝ Է. Մուրադյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վարդաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վարդաշեն, 091162071, VARDASHENI@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 31-Ն

## ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Վարդաշեն համայնքի 2018 թվականի տեղական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

1. /01.01.01.51/գործառնական՝ դասակարգման <<Կառավարման մարմնի պահպանում>> ծրագրի 4111<<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդվածից պակասեցնել 45 000/քառասունհինգ հազար/դրամ և ավելացնել՝

*1.1. նույն ծրագրի 4261 <<Գրասենյակային նյութեր>> հոդվածին 20 000/քսան հազար/ դրամ*

*1.2 /10.07.01.54/գործառնական դասակարգման <<Սոցիալապես անապահով անձանց աջակցություն >> ծրագրի 4729<<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածին 25 000 /քսանհինգ հազար/ դրամ:*

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԿՈԼՅԱ
ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ՀԱԿՈԲ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԳԵՎՈՐԳ ԲԱՐԽՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վարդաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վարդաշեն, 091162071, VARDASHENI@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 32

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՆՓՈՓՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**

Հաստատել գույքագրման հանձնաժողովի 10.12.2018թ -ի կազմած ակտը. համայնքապետարանի գույքագրման արդյունքների վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԿՈԼՅԱ

ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ԲԱՐԽՈՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Վարդաշեն համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 32 որոշում

## ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱԿՏ

Համայնքի սեփականություն հադիսացող գույքի գույքագրման հանձնաժողովը ի դեմս նախագահ՝ աշխատակազմի քարտուղար, անդամներ՝ համայնքապետարանի գլխավոր մասնագետ Զարուհի Ղազարյանի ,համայնքի ավագանու անդամ Գևորգ Հայրապետյանի, հիմք ընդունելով 2018թ. դեկտեմբերի 19-ի թիվ 30 որոշումը, կազմեցինք սույն ակտը այն մասին,որ ս/թ դեկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 10-ը կատարեցինք համայնքին պատկանող գույքի, կառույցների , շինությունների և առկա այլ ապրանքների գույքագրում՝

| Հ/Հ | ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ | ՔԱՆԱԿԸ /միավոր/ | ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԱՐԺԵՔԸ /ՀՀ դրամ/ | ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ | ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքապետարանի շենք | 1973 | 1 | 13 365.378 | 13 365.378 | առկա | բավարար |
| 2 | Ավտոմեքենա VAZ-2107 | 1990 | 1 | 1 005.0 | 100% | առկա | բավարար |
| 3 | Համակարգիչի պրոցեսոր | 2010 | 1 | 228 135 | 100% | առկա | բավարար |
| 4 | Համակարգիչի պրոցեսոր | 2014 | 1 | 228 135 | 46 232 | առկա | լավ |
| 5 | Համակարգիչ/մոնիտոր,պրոցեսոր,ստեղնաշար,մկնիկ/ | 2018 | 1 | 110 000 | 110 000 | առկա | լավ |
| 6 | Պատճենահանող բազմ.սարք սարք | 2010 | 1 | 90 450 | 100% | առկա | բավարար |
| 7 | Պատճենահանող բազմ.սարք սարք | 2014 | 1 | 90 450 | 39 279 | առկա | բավարար |
| 8 | Հակահրդեհային կրակմարիչներ | 2016 | 4 | 72 360 | 234 624 | առկա | բավարար |
| 9 | Հոսանքի կարգավորիչ | 2014 | 1 | 22 110 | 13 442 | առկա | բավարար |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Մոնիտոր | 2010 | 1 | 65 325 | 100% | առկա | բավարար |
| 11 | Մոնիտոր | 2014 | 1 | 65 325 | 28 368 | առկա | բավարար |
| 12 | Ստեղնաշար | 2010 | 1 | 5 025 | 100% | առկա | բավարար |
| 13 | Ստեղնաշար | 2014 | 1 | 5 025 | 1018 | առկա | բավարար |
| 14 | Մկնիկ | 2010 | 1 | 3 015 | 100% | առկա | բավարար |
| 15 | Մկնիկ | 2014 | 1 | 3 015 | 611 | առկա | սարքին |
| 16 | Դինամիկներ | 2010 | 1 | 4020 | 100% | առկա | անսարք |
| 17 | Դինամիկներ | 2014 | 1 | 4020 | 815 | առկա | սարքին |
| 18 | Անխափան սնուցող սարք | 2010 | 1 | 14 070 | 100% | առկա | անսարք |
| 19 | Անխափան սնուցող սարք | 2014 | 1 | 14 070 | 2 851 | առկա | սարքին |
| 20 | Էլ ջեռուցիչ | 2012 | 1 | 45 225 | 18 330 | առկա | սարքին |
| 21 | Էլ.ջեռուցիչ | 2000 | 1 | 10 050 | 100% | առկա | անսարք |
| 22 | Էլ ջեռուցիչ քարով | 2018 | 1 | 13 900 | 13 900 | առկա | սարքին |
| 23 | Էլ.տաքացուցիչ փչովի | 2018 | 1 | 7 200 | 7 200 | առկա | սարքին |
| 24 | Կախիչ | 1990 | 2 | 814 | 100% | առկա | սարքին |
| 25 | Երկաթյա սեյֆ | 1980 | 2 | 3 504 | 100% | առկա | սարքին |
| 26 | Գրասեղան | 1990 | 4 | 4221 | 100% | առկա | անսարք |
| 27 | Գրասենյակային սեղան | 2018 | 2 | 120 000 | 120 000 | առկա | սարքին |
| 28 | Գրասենյակային սեղան | 2018 | 1 | 80 000 | 80 000 | առկա | սարքին |
| 29 | Համակարգչային աթոռ | 2018 | 8 | 112 000 | 112 000 | առկա | սարքին |
| 30 | Աթոռ ղեկավարի | 2018 | 1 | 48 000 | 48 000 | առկա | սարքին |
| 31 | Կավրոլիտ | 2018 | 6մ | 25 800 | 25 800 | առկա | սարքին |
| 32 | կավրիկ | 2018 | 1 | 1 200 | 1 200 | առկա | սարքին |
| 33 | Լուսատուփ | 2018 | 7 | 81 200 | 81 200 | առկա | սարքին |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 34 | Խմելու ջրագծերի խողովակներ և կցամասեր | 2018 | 370մ | 442 192 | 442 200 | առկա | սարքին |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ՝** | | | **16 390 234** | **14 792 448** | | |

**Հանձնաժողովի նախագահ՝** **Է.Մուրադյան**

**Անդամներ՝** **Ջ.Ղազարյան**

**Գ.Հայրապետյան**

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԷԼՄԻՐԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վարդաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վարդաշեն, 091162071, VARDASHENI@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 33-Ա

## ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ , ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**

Հաստատել Վարդաշեն համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը , համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

| Կողմ - | Դեմ - | Ձեռնպահ - |
|---|---|---|
| ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԿՈԼՅԱ | | |
| ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ՀԱԿՈԲ | | |
| ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ | | |
| ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ԲԱՐԽՈՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Վարդաշեն համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 33-Ա որոշում

## ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 5,
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 193 000 |
| Համայնքային ծառայողներ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 154 000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 138 000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/3.1-1 | 1 | 124 000 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Հավաքարար | 1 | 74 000 |
| Պահակ | 1 | 74 000 |
| Ընդամենը | 5 | 757 000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՝ ԷԼՄԻՐԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վարդաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վարդաշեն, 091162071, VARDASHENI@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 34

### ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 25.10.2012թ թիվ 1351-Ն որոշման , Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարի 09.11.2012թ թիվ 550-Ն հրամանի , Արարատի մարզպետի 19.09.2018թ թիվ 18 շրջաբերականի և ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Վարդաշեն համայնքի 2017-2021թթ սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրում ընդգրկել համայնքի սեսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացման ծրագիրը :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԿՈԼՅԱ

ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ԲԱՐԽՈՅԱՆ